հել տանջուող, ճնշուող ժողովրդին — ազատութիւն կիսալուսնի առաջ անարգուած խաչին և բարբարոսի ձեռով ցեխը նետուած աւետարանին։

Տարաբաղտաբար այդ ժամանակ Անգլիայի առաջին նախարարը այլ հայեացք ունէր տաճկական կառավարութեան վերայ։ Նա տակաւին պնդում էր սուլթանի յարատևութիւնը և մինչև անգամ խէթ աչքով էր նայում ազատութեան կարօտ սլաւոնների վերայ։ Սակայն Գլադստոնը չէր լռում և իւր հզօր ձայնը հասցնելով Անգլիայի սահմաններից դուրս, փրկութիւն, ազատութիւն էր գոչում աշխարհի ճնշուածների համար։

Եօթանասնական թուականներին ազատուեցին Սերբիան, Զերնոգորիան և Բոլգարիան, իսկ իննսնական թուականին հերթը հասաւ դարերով արտասուող Տաճկա-Հայաստանին...։

Եւ այսպէս ամբողջ վաթսուն և հինգ տարի Վիլիամ Գլադստոնը աւետարանը կրծքին սղմած, անընկճուն ժայռի պէս, անյողդողդ հաւատով և անվեհեր հոգով քաջ ախոյեան հանդիսացաւ աշխարհի ճնշուածների, խեղճերի և արտասուողների համար։

Եւ տասնևիններորդ դարը համբընթաց գլորուում էր նրա կեանքի հետ լցնելով պատմութեան էջերը շարունակ արտասուքով և ողբով։

Կ.

Մեր հրատարակութեամբ լոյս տեսնող «Դիւան Հայոց պատմութեան»-ժողովածուի Դ. գիրքը, մի ստուար հատոր, այս օրերս լոյս կտեսնի. այդ հատորը բովանդակում է իւր մէջ Ղուկաս կաթուղիկոսի կոնդակներն ու նոցանից քաղուածքներ։

Պատրաստում ենք հետևեալ հատորը, որի մէջ կը

մտնեն բազմաթիւ ժամանակագրութիւններ հանգ. Ղեւոնդ վարդ. Փէրղալէմեանի և մեր հաւաքածոյքից. մեր բաժանորդների համար անհետաքրքիր չենք համարում առաջ բերել այստեղ այդ Ե. հատորի համառօտ ցանկը.—

1. Գրիգոր Ծերենց Խլաթեցի.
2. Սիմէոն վարդապետ Ռըշտունցի.
3. Թովմայ Մինասեանց.
4. Յովհաննէս քահ. Արճիշեցի.
5. Գրիգոր դպիր.
6. Դաւիթ վարդապետ Բաղիշեցի.
7. Բարսեղ վարդապետ Վարագեցի.
8. Յովհաննէս ք. Ծղակեցի.
9. Բարդուղիմէոս արքեպ. Ճուշանցի.
10. Իգնատիոս երէց Համշեցի.
11. Վարդան վարդապետ Բաղիշեցի.
12. Անյայտ ժամանակագիր.
13. Հաւաքումն պատմութեանց տանն Վասպուրականի.
14. Յարութիւն քահանայ Խալիպայեան.
15. Յաջորդութիւնք Վանայ Բդեշխիցն.
16. Յովհաննէս Սեբաստացի պատմիչ.
17. Յովհաննէս վարդ. Ադար Մոկացի.
18. Ինչ ինչ ժամանակագրութիւնք.
19. Իսահակ երէց Սահրատեան.
20. Յովհաննէս եպիսկ. Շահխաթունեան.
21. Կաթուղիկոսք Աղթամարայ.
22. Մանուէլ վարդ. Կիւմիւշխանեցի. և այլն։

Աչքի առաջ ունենալով այն մեծ նշանակութիւնը, որ ունի պատմական քրոնիկոնների և դօկումէնտների հրատարակութիւնը աղգային պատմութեան ուսումնասիրութեան և թերին լրացնելու համար, որոնց մինչև հաճութեամբ նուիրել ենք մեր թոյլ ոյժերը, սիրելի է մեզ լուսալ, որ կգտնուին բարեսէր անձինք, որոնք կը նպաստեն այդ մեծահատոր ժողովածուի տպագրութեան գործին։